ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

սեպտեմբերի 2026 թվականի №-Ա

«ԿԱՐԲԻ ՋՐՀՈՍ» ՀԷԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ №0404 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԿԱՐԲԻ ՋՐՀՈՍ» ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2026 թվականի ապրիլի 29-ի և ի լրումն ապրիլի 30-ի գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Ընկերությանը Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 18-ի №256Ա որոշմամբ տրամադրված «Կարբի ջրհոս» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0404 լիցենզիայի (այսուհետ՝ №0404 լիցենզիա) գործողության ժամկետը 15 տարով երկարաձգելու հայտով:

Հայտի և կից ներկայացված փաստաթղթերի, այդ թվում՝ ջրօգտագործման թույլտվությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ փոփոխվել են Կայանի ջրառի նիշերը՝ նախկին երկու ջրառներից մեկն ապամոնտաժվել է, իսկ մյուս ջրառը տեղափոխվել է ավելի բարձր նիշ և կառուցվել է նոր գլխամասային հանգույց, այսինքն՝ ենթադրաբար վերը նշվածի արդյունքում տեղի է ունեցել հիդրոէլեկտրակայանի սխեմայի փոփոխություն, մինչդեռ Ընկերությունը նախապես չի ստացել նշված փոփոխություններն իրականացնելու վերաբերյալ հանձնաժողովի համաձայնությունը, իսկ փոփոխությունների իրականացումից հետո չի տեղեկացրել Հանձնաժողովին այդ մասին:

բ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2026 թվականի մայիսի 7-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին» օրենքի, Հանձնաժողովի՝ էներգետիկայի բնագավառում օրենսդրության համաձայն ընդունված իրավական ակտերով սահմանված պահանջների, այդ թվում՝ Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 18-ի №256-Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված Կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0404 լիցենզիայի պայմանների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 7-ի №ՄՄ/34.1-Մ2-4/2421-2026 գրությամբ,

գ) Հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 13-ի №120-Ա որոշմամբ №0404 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2041 թվականի մայիսի 18-ը, քանի որ Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի համաձայն լիցենզիայի երկարաձգման նպատակով տվյալ տեսակի կայանի համար հայտը պետք է պարունակի միայն ջրօգտագործման թույլտվություն և Ընկերությունը ներկայացրել է Կայանի շահագործման նպատակով տրամադրված 2026 թվականի ապրիլի 30-ի №216-26 ջրօգտագործման թույլտվությունը, և միաժամանակ առկա չեն եղել հայտի մերժման հիմքեր, այդ թվում՝ վերը նշված ենթադրյալ խախտման փաստը դեռևս հաստատված չլինելու հանգամանքով պայմանավորված,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2026 թվականի հուլիսի 21-ի գրությամբ հայտնել է, որ Կայանի սնուցումն իրագործվել է Կարբի գետի աջ և ձախ վտակներից, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրված 600 լ/վ ջրօգտագործման թույլտվությամբ, և Կայանի հզորությունը կազմել է 1 ՄՎտ: Աջ և ձախ վտակների վրա կառուցված ջրընդունիչները գտնվել են Կայանի շենքից 148 մ բարձրության վրա: 2012 թվականին «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի Վանաձորի մասնաճյուղի կողմից ձախ վտակում՝ 2900 մ բարձրության վրա, կապտաժների կառուցման հետևանքով ջրի քանակը ձախ վտակում կտրուկ նվազել է և Կայանն աշխատել է թերբեռնված՝ քանի որ ջրի սնուցումը հիմնականում իրականացվում էր

աջ վտակից, որն էլ չէր ապահովում 1 ՄՎտ հզորությունը: Հետևաբար Ընկերությունը 2013 թվականի սեպտեմբերի 13-ի №001 գրությամբ դիմել է ՀՀ բնապահպանության նախարարին առ այն, որ Կարբի գետի ձախ՝ «Ծովասար» վտակը նվազել է, ջրի քանակությունը սակավացել է, որը բավարար է միայն էկոլոգիական թողքին: Ելնելով վերոնշյալից, խնդրել է որպեսզի Կարբի գետի ձախ՝ «Ծովասար» վտակի ջրօգտագործման թույլտվությունը դադարեցվի՝ ձախ վտակում ջրի քանակի սակավության պատճառով և այն վերաձևակերպվի աջ վտակից 600 լ/վ ջրօգտագործման թույլտվությամբ՝ ջրառի նիշի փոփոխությամբ: ՀՀ բնապահպանության նախարարությունը ընդունելի է համարել Կարբի գետի աջ վտակից ջրօգտագործումը տեղափոխել ավելի բարձր նիշ՝ պահպանելով 2013 թվականի հունվարի 20-ին տրված №000007 ջրօգտագործման թույլտվության 600 լ/վ և էկոլոգիական թողքի ծավալը (ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2013 թվականի սեպտեմբերի 30-ի №5/18.2/52908-13 գրություն): Նախագծվել է աջ վտակից սնուցող գծի երկարացման նախագիծ, որով առաջարկվում էր հրաժարվել ձախ վտակի ջրառից՝ 1 ՄՎտ նախագծային հզորության ապահովման պայմանով: Հաստատված նախագծի և Շահումյան համայնքի ղեկավարի կողմից 2014 թվականի սեպտեմբերի 1-ին տրված №04 շինարարության թույլտվության համապատասխան՝ ապամոնտաժվել է ձախ «Ծովասար» վտակի խողովակաշարը և տեղափոխվել է աջ վտակ (ջրառի նիշն ընունելով 1965 մ)՝ առանց փոփոխության ենթարկելու, պահպանելով Կայանի շենք մուտք գործող՝ գոյություն ունեցող 2011 թվականի սխեման՝ 2 հատ 500 կՎտ հզորությամբ մոնտաժված գեներատորները, նաև անփոփոխ թողնելով տուրբինները՝ Կայանի նախագծային հզորությամբ (500+500 կՎտ): Աջ վտակի երկարացման և ջրառի կառուցման աշխատանքներն ավարտվել են 2014 թվականի դեկտեմբերի 24-ին: Ջրառի նիշի փոփոխությունը կատարվել է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրված ջրօգտագործման թույլտվության համաձայն: Սակայն, Ընկերության տեղյակ չլինելու պատճառով Հանձնաժողովին Կայանում կատարված փոփոխության մասին չի տեղեկացվել: Բացատրության հետ մեկտեղ ներկայացվել են ավարտված շինարարական օբյեկտը ընդունող հանձնաժողովի ակտը, ավարտական ակտը (շահագործման թույլտվություն) և կադաստրի վկայականը:

ե) ի լրումն 2026 թվականի հուլիսի 21-ին ներկայացված հիմնավորումների, 2026 թվականի հուլիսի 30-ի գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ հարուցված

վարչական վարույթում քննվող հարցին առնչվող ներկայացված փաստաթղթերում անտեսվել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքից գործին վերաբերող տեղեկանք ներկայացնելու հանգամանքը, որի համար անհրաժեշտ է որոշակի ժամանակ և խնդրել է վարչական վարույթում քննվող հարցի ժամկետը երկարաձգել,

զ) Հանձնաժողովը 2026 թվականի մայիսի 7-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը Հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 5-ի №208-Ա որոշմամբ երկարաձգվել է մեկ ամիս ժամկետով,

է) «Էներգետիկայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ Կարգավորման հիմնական միջոցներն են՝ ա) գործունեության լիցենզավորումը, լիցենզիայի պայմանների սահմանումը և դրանց վերահսկումը…,

«Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից սույն օրենքի դրույթները, հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում հանձնաժողովն իրավասու է կիրառելու սույն օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցները, վերականգնելու մինչև խախտումը եղած դրությունը, կատարելու դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալ դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առանձնահատկությունները:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձի կողմից կարգավորող հանձնաժողովի՝ էներգետիկայի բնագավառում օրենսդրության համաձայն ընդունված իրավական ակտի պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե արարքը չի պարունակում սույն հոդվածի այլ մասերով սահմանված այլ վարչական իրավախախտման հատկանիշներ, առաջացնում է նախազգուշացում:

Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի

պայմանների կոպիտ խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է կարգավորող մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանն առաջացնում է տուգանք՝ տասը միլիոն դրամից քսան միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

«Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Լիցենզիայի գործողության կասեցումը որոշակի ժամկետով կամ որոշակի պայմաններով լիցենզավորված անձին լիցենզավորման ենթակա գործունեությունը կամ այդ գործունեության առանձին գործառույթները կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկումն է:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիցենզիայի գործողության կասեցման ընթացքում լիցենզավորված անձն իրավունք չունի իրականացնել կասեցման որոշմամբ սահմանված գործունեություն, գործառույթ կամ գործողություն, բացառությամբ նրանց, որոնք ուղղված են լիցենզիայի գործողության կասեցման պատճառները վերացնելուն, ինչպես նաև կասեցման մասին որոշմամբ նախատեսված անհետաձգելի միջոցառումներն իրականացնելուն:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Լիցենզիայի գործողությունը կասեցնելու որոշմամբ պետք է հստակ սահմանվեն կասեցվող գործողությունը, գործառույթը կամ գործողությունները, ինչպես նաև կասեցման պատճառները, իրավական հիմքերը և ժամկետները:

Եթե, խախտման բնույթից ելնելով, դրանք կամ դրանց հետևանքները հնարավոր է վերացնել լիցենզավորված անձին լիցենզավորման ենթակա գործունեության առանձին գործառույթները կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկելու միջոցով, ապա այդ դեպքերում լիցենզիայի ողջ գործողության կասեցում չի կիրառվում:

№0404 լիցենզիայի պայմանների՝

5-րդ կետի համաձայն՝ Լիցենզավորված գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը (գործունեության վայրը) Հայաստանի Հանրապետության

Լոռու մարզի Շահումյան համայնքի վարչական տարածքն է՝ Կարբի գետի աջ և ձախ վտակների վրա (բնական ջրահոսք),

6-րդ կետի համաձայն՝ Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է սույն լիցենզիայով սահմանված ժամկետում (ժամանակահատվածում) 1000 կՎտ հաշվարկային հզորությամբ «Կարբի ջրհոս» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն),

13-րդ կետի համաձայն՝ Ընկերության կողմից Կայանի կառուցումը և շահագործումն իրականացվում է համաձայն էլեկտրակայանի նախագծային փաստաթղթերով նախատեսված սխեմայի՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

24-րդ կետի համաձայն՝ Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են սույն լիցենզիայի պայմանների խախտումների կամ կարող են դառնալ սույն լիցենզիայի պայմանների խախտումների անմիջական պատճառ:

Վերոգրյալ նորմերի բովանդակությունից հետևում է, որ Կարգավորման հիմնական միջոցներն են ոչ միայն գործունեության լիցենզավորումը, այլ նաև լիցենզիայի պայմանների սահմանումը և ***դրանց վերահսկումը****: Գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում հանձնաժողովն իրավասու է կիրառելու «Էներգետիկայի մասին» օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցները.*

ը) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է №0404 լիցենզիայի պայմանների 13-րդ կետը՝ ներկայումս վերջինիս կողմից Կայանի շահագործումն իրականացվում է նախագծային փաստաթղթերով նախատեսված սխեմային ոչ համապատասխան: Մասնավորապես, համաձայն Հանձնաժողով ներկայացված Կայանի կառուցման շրջակա միջավայրի ազդեցության և մասնագիտական փորձաքննություն անցած նախագծի, ինչպես նաև №0404 լիցենզիա ստանալու համար Հանձնաժողով ներկայացված՝ 2011 թվականի փետրվարի 9-ի №000028 ջրօգտագործման թույլտվության՝ Կայանը երկճյուղ է՝ ջրառն իրականացվում է Կարբի գետի աջ և ձախ վտակներից և առկա են երկու ջրառի կոորդինատական կետեր (նիշեր), մինչդեռ Ընկերության 2026 թվականի ապրիլի 30-ի գրությամբ ներկայացված 2026 թվականի ապրիլի 30-ի №216-26 ջրօգտագործման թույլտվության մեջ ջրառն իրականացվում է Կարբի գետի աջ վտակից և առկա է ջրառի մեկ կոորդինատական կետ

(նիշ): Բացի այդ, սխեմայի փոփոխությունը փաստվել է նաև Ընկերության 2026 թվականի ապրիլի 29-ի գրությամբ Հանձնաժողով ներկայացված փոփոխված գլխամասային հանգույցի և համապատասխան սերվիտուտով ծանրաբեռնված հողամասերի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթերից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 29-ի №01-3720 գրությունից, ըստ որի Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրում 2014 թվականի կառուցապատման թույլտվությամբ իրականացվել է Կայանը սնուցող «Սպիտակ Ջուր» գործող ջրատարի երկարացում և ջրընդունիչի կառուցում՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված նախագծի:

Կայանի նախագծային փաստաթղթերով նախատեսված սխեմային ոչ համապատասխան շահագործումն իրականացնելը և նշված հանգամանքների վերաբերյալ Հանձնաժողովին չտեղեկացնելը հանգեցրել է կարգավորող մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացման խոչընդոտման, քանի որ Հանձնաժողովը նշված պարագայում զրկված է եղել, ինչպես նաև շարունակում է զրկված իր կողմից իրականացվող լիցենզավորման գործընթացի մաս կազմող՝ լիցենզիայի պայմանների վերահսկման, դրանցում համապատասխան փոփոխությունների կատարման գործառույթների պատշաճ իրականացման հնարավորությունից:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ լիցենզիայի պայմաններով հստակ սահմանված է Ընկերության՝ Կայանի շահագործումը էլեկտրակայանի նախագծային փաստաթղթերով նախատեսված սխեմայի համաձայն իրականացնելու պարտականությունը, իսկ Ընկերության կողմից Կայանի շահագործումն այս պահին չի իրականացվում և օբյեկտիվորեն չի կարող իրականացվել էլեկտրակայանի նախագծային փաստաթղթերով նախատեսված սխեմայի համաձայն, Հանձնաժողովի գնահատմամբ, սույն խախտման առաջացրած հետևանքը, այդ թվում դրա շարունակական բնույթը, չի կարող հանգեցնել տուգանք պատասխանատվության միջոցի ընտրության, քանի որ տուգանքն էապես ոչ համարժեք պատասխանատվության միջոց է, քանի որ այն չի կարող հետապնդել օրենքով կանխորոշված իրավաչափ նպատակ:

Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովը գտնում է, որ օրենքով կանխորոշված իրավաչափ նպատակ հետապնդող պատասխանատվության միջոց կարող է

հանդիսանալ Լիցենզիայի գործողության կասեցումը: Միաժամանակ Ընկերությունը չի ներկայացրել իրավասու մարմնի կողմից տրված որևէ հիմնավորում՝ Կայանի շահագործման նախագծային փաստաթղթերով նախատեսված սխեմային ոչ համապատասխան գործունեություն իրականացնելու իրավաչափության վերաբերյալ: Հանձնաժողովի գնահատմամբ հենց այս պատասխանատվության միջոցի կիրառումը կբացառի Կայանի՝ էլեկտրակայանի նախագծային փաստաթղթերով նախատեսված սխեմային ոչ համապատասխան շահագործելու, այսինքն՝ Հանձնաժողովի իրավական ակտերի խախտումը շարունակելու հնարավորությունը, և միաժամանակ այս պատասխանատվության միջոցի կիրառումը կստեղծի անհրաժեշտ պայմաններ Ընկերության կողմից իր գործունեությունը Հանձնաժողովի իրավական ակտերին համապատասխանեցնելու ուղղությամբ ջանքեր գործադրելու համար:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության հիմնական գործառույթն էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործառույթն է, առկա չէ այնպիսի առանձին գործառույթ կամ գործողություն, որի ժամանակավոր դադարեցմամբ հնարավոր կլինի ապահովել դրանով հետապնդվող իրավաչափ նպատակի իրագործումը: Այսինքն՝ խախտման բնույթից ելնելով, դրա հետևանքները հնարավոր չէ վերացնել լիցենզավորված անձին լիցենզավորման ենթակա գործունեության առանձին գործառույթները կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկելու միջոցով:

Բացի այդ, Հանձնաժողովը գտնում է, որ լիցենզիայի գործողության կասեցման հետևանքով ուղղակի վնաս չի կարող հասցվել պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին ու բարի համբավին, ինչով պայմանավորված առկա չեն վնասների հատուցման կարգ կամ հետևանքների վերացման ժամկետ սահմանելու համար:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է կիրառել «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված լիցենզիայի գործողության կասեցում պատասխանատվության միջոցը՝ կասեցնելով Ընկերության՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության հիմնական և դրանից ածանցվող գործառույթները մինչև խախտման պատճառի վերացումը և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերը, «Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. №0404 լիցենզիայի պայմանների 13-րդ կետի խախտման հիմքով կասեցնել լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից 15 օրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
--- սեպտեմբերի 2026թ.